ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000117

Ձեռնարկողը՝ ***«Ապրիում Պրո ստուդիո» ՍՊԸ***
Ք. Երևան, Մ. Բաղրամյան 1, 14շ.

Գործունեությունը՝ ***«Դիլիջան» համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000117

<< 03 >> 12 2020թ.

Տավուշի մարզի Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Ատրիում Պրո ստուդիո» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրութային փաստաթուղթ.
	- ազդեցության ռազմավարական գնահատման
	(ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Տավուշի մարզի Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նպատակն է տարածքային պլանավորման միջոցով, համայնքի համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման, տարածքների սեյսմիկ խոցելիության նվազեցման (բնակարանային ֆոնդի, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների համար) անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը: Նախագիծը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36):

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվել են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի համայնքների միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այդ թվում՝

- խրախուսել և աջակցել տարածքի պատմամշակութային առանձնահատկություններին և պահպանության ռեժիմին համապատասխանող քաղաքաշինական և կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացմանը,
- ապահովել քաղաքաշինական նախագծերի հաստատման գործընթացի թափանցիկությունը, հրապարակայնությունը և որոշումների կայացմանը հանրության մասնակցությունը,
- նպաստել ներդրումային միջավայրի բարելավմանը և տարածքի զարգացմանն ուղղված նոր ներդրումային ծրագրերի ներգրավմանը,
- ներդնել տարածքի զարգացման և ներդրումային գրավչության մակարդակի բարձրացմանը նպաստող համակարգեր,

- բացահայտել մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը,
- նպաստել «մաքուր քաղաք» և «կանաչ քաղաք» հայեցակարգի ներդրմանը և այլն:

Դիլիջանի տարածաշրջանի զարգացման ծրագիրը նախատեսվում է կազմել կայուն զարգացման սկզբունքների հիման վրա, որը տնտեսական զարգացման բոլոր նախապատվությունները համադրում է բնական միջավայրի ինքնավերարտադրողականության հետ:

Նկարագրական մաս

Տավուշի մարզի տարածքը ներառում է Տավուշի, Իջևանի և Նոյեմբերյանի նախկին վարչական շրջանների 62 համայնքները (որից 58-ը գյուղական): Մարզի ընդհանուր տարածքը 270.4 հազար հեկտար է, որը հանրապետության ընդհանուր տարածքի 9.1%-ն է: Անտառային ֆոնդի հողերը 140.3 հազար հեկտար է, որը հանրապետության անտառային ֆոնդի հողերի գերակշռող մասն է՝ (33.4%): Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 93.6 հազար հեկտար կամ մարզի ընդհանուր տարածքի 34.6 %-ը: Տավուշի մարզի գյուղատնտեսության և ագրոպարենային համակարգում գերակշռող դեր է խաղում անասնապահությունը, որն ապահովում է մարզի համախառն ներքին արդյունքի 40-45 %-ը:

Դիլիջանի գոգավորությունում են գտնվում Պարզ և Գոշ փոքր լճերը, որոնք ունեն բարձր էսթետիկական արժեք: Առկա են բուժիչ հանքային ջրերի աղբյուրներ, որոնցից առավելապես հայտնի են «Դիլիջան» և «Ֆրոլովա բալկա» հանքային ջրերը:

Հողերը ներկայացված են երկու հիմնական տիպերով՝ գորշ լեռնա-անտառային և գորշ լեռնա-տափաստանային հողերի տեսքով: Առանձին վայրերում, ուր էրոզիոն երևույթները թույլ են արտահայտված հողի շերտի հաստությունը հասնում է շուրջ 40 սմ:

Տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Կուրի ավազանին: Գետերն արագահոս են, սահանքավոր: Հյուսիս-արևմուտքում Լոռու մարզի սահմանով հոսում է Դեբեդը: Ամենամեծ գետը Աղստևն է՝ Բլդան, Գետիկ, Հաղարծին, Սառնաջուր վտակներով: Տարածքով են հոսում Հախում, Տավուշ, Խնձորուտ, Կողբ, Քարհան, Ոսկեպար գետերը: Կառուցվել են Ոսկեպարի (Ջողասի), Այգեձորի, Տավուշի, Հախումի ջրամբարները:

Մարզում օգտագործվող ջրի քանակը կազմում է շուրջ 12. 2 մլն մ^3, որը մեկ շնչի հաշվով շուրջ 8 անգամ ավելի քիչ է քան հանրապետական միջինը: Միևնույն ժամանակ մարզում օգտագործվող ջրի գերակա մեծամասնությունը, շուրջ 83% օգտագործվում է գյուղատնտեսության համար, արդյունաբերական նպատակների համար օգտագործվում է ջրի շուրջ 5. 7%, գյուղատնտեսության և արդյունաբերության համար օգտագործվող ջրի քանակը շուրջ 10 անգամ ցածր է հանրապետական միջինից, խմելու համար օգտագործվում է ջրի 11% կամ տարեկան 1. 4 մլն մ^3, այս դեպքում օգտագործման ծավալները ցածր են հանրապետական միջին ցուցանիշներից շուրջ 3 անգամ:

Դիլիջանի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը ներառում է Դիլիջանի քաղաքային, Հաղարծին, Գոշ, Թեղուտ, Հովք, Խաչարձան և Աղավնավանք գյուղական համայնքները:

Համայնքների տարածքներն են՝

- Դիլիջան՝ մակերեսը 120.5695կմ^2, բնակչությունը՝ 27518 մարդ,
- Հաղարծին՝ մակերեսը 36.7կմ^2, բնակչությունը՝ 3506 մարդ,
- Գոշ՝ մակերեսը 15.4կմ^2, բնակչություն՝ 1094 մարդ,
- Թեղուտ՝ մակերեսը 9.45կմ^2, բնակչությունը՝ 1542 մարդ,

- Հովք՝ մակերեսը 13.8կմ², բնակչությունը՝ 413 մարդ,
- Խաչարձան՝ մակերեսը 11.1կմ², բնակչությունը՝ 535 մարդ,
- Աղավնավանք՝ մակերեսը 22.6կմ², բնակչությունը՝ 237 մարդ:

Համայնքների զարգացման ոլորտների հիմնական առաջնային ուղղություններն են՝

- գոյություն ունեցող արտադրության հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- զբոսաշրջության զարգացումը,
- շրջակա միջավայրի բարելավումն ու պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությունը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությունը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների և միջհամայնքային ճանապարհների վերանորոգման կազմակերպումը,
- գյուղատնտեսական բարձրորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարման, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառման բացառումը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայումը և հստակեցումը,
- բոլոր համայնքների գազաֆիկացումը,
- համայնքների բնակչությանը խմելու ջրով ապահովելը,
- համայնքների ոռոգման ջրի ցանցի արդիականացումը և ընդլայնումը,
- աղբի տեսակավորման նախատեսում,
- աղբավայրերի նախատեսում՝ սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական համայնքների կոյուղացում,
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և գործարկում,
- նորագույն տեխնոլոգիաների ներդրման նախատեսում՝ արևային էներգիայով և բիոգազով ջեռուցման համար և այլն:

Մարզում կարևոր տեղ են զբաղեցնում Բերդի, Այրումի, Դիլիջանի, Իջևանի և Նոյեմբերյանի կաթի վերամշակման և պանրի գործարանները, Այրումի և Տավուշի պահածոների, Տավուշի, Իջևանի և Նոյեմբերյանի գինու գործարանները, Իջևանի և Դիլիջանի հանքային ջրերի գործարանները և այլն: Նշված գործարանները, արտադրամասերն ու կոմբինատները ներկայումս աշխատում են մասնակիորեն, իրենց նախագծային հզորությունների 8-12 %-ի չափով: Ըստ ՀՀ պետական ռեգիստրի տվյալների համայնքում գրանցված է 795 ձեռնարկություն: Դիլիջան համայնքում գործունեություն են ծավալում 11 ֆինանսական կազմակերպություններ:

Դիլիջան համայնքի տնտեսությունը կառուցված է երեք հիմնական բաղադրիչներից՝ փոքր համայնքային ձեռնարկություններ, մեծ և միջին ձեռնարկություններ և գյուղատնտեսություն՝ փոքր ու մեծ ֆերմերային տնտեսություններով: Համայնքի տնտեսությունը, բացի աշխատատեղեր և ընդհանուր բարեկեցություն ապահովելուց, ունի նաև մեկ այլ հիմնական գործառույթ՝ ապահովելով բավարար միջոցներ սոցիալական հատվածի համաչափ զարգացման (կրթություն, առողջապահություն և այլն) և ենթակառուցվածքների (ճանապարհներ, գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարում և այլն) անխափան վիճակի համար, ինչպես նաև հնարավորինս բարելավել էկոլոգիական իրավիճակը:

Դիլիջան համայնքը հանդիսանում է Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից

մեկը, որտեղ վերջին տարիներին իրականացվող նախագծերի արդյունքում նաև զարգանում է կրթական և մշակութային ոլորտները:

Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելյան մասում՝ Աղստև գետի հովտում, ծովի մակերևույթից 1100-1510 մետր բարձրության վրա: Արևմուտքից այն սահմանակից է Լոռու մարզին, հարավ-արևմուտքում՝ Կոտայքի մարզին, հարավից՝ Գեղարքունիքի մարզին, արևելքից՝ Ադրբեջանին, իսկ հյուսիսում՝ Վրաստանին:

Քաղաքը Մ-4 միջպետական նշանակության ավտոճանապարհով կապված է մայրաքաղաք Երևանին (99 կմ), Վանաձորի և Իջևանի հետ (35-40 կմ), 1986 թվականից երկաթուղով կապված է Հանրապետության երկաթուղային ցանցին:

Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնա-անտառային չափավոր զով ամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարինը՝ 0 ից -2:

Դիլիջան քաղաքի հարավ-արևմտյան եզրամասի և Աղստև գետի միջին հոսանքի տարածքներն աչքի են ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով: Քաղաքի տարածքում և դրա շրջակայքում լայն տարածում են գտել սողանքային երևույթները, սելավները, փլուզումները և այլ վտանգավոր երկրաբանական երևույթները, որոնք բավական մեծ վնաս են պատճառում քաղաքի տնտեսությանը:

Դիլիջան համայնքի տարածքը գրեթե ամբողջությամբ շրջապատված է անտառով՝ 1786.45հա: Անտառը գտնվում է 1200-2000մ ծ.մ. բարձրությունների սահմաններում: Անտառի վերին սահմանից սկսվում են լեռնային արոտավայրերը, որոնք ծածկված են լեռնա-մարգագետնային բուսականությամբ: Դիլիջան համայնքի սահմանամերձ շրջակայքը աչքի է ընկնում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների մեծ բազմազանությամբ:

Դիլիջանը համարվում է Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկը: Այստեղ է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը, որի ընդհանուր տարածքը կազմում է 33765հա և այն բաժանված է երեք գոտիների՝ արգելոցային, տնտեսական և ռեկրեացիոն: «Դիլիջան» ազգային պարկը ստեղծվել է 1958 թ. որպես պետական արգելոց, իսկ 2002թ. վերափոխվել է ազգային պարկի:

«Դիլիջան» ազգային պարկը բաժանված է 4 տեղամասերի, դրանք են.

- «Դիլիջան»,
- «Շամախյան»,
- «Հաղարծին»,
- «Գոշ»:

Ազգային պարկը բաժանված է նաև տարածքագործառնական հինգ գոտիների՝ պահպանական, տնտեսական, ռեկրեացիոն, արգելոցային և արգելավայրային:

Ազգային պարկի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ, մեզոֆիլ անտառային լանդշաֆտների, գիտական, ճանաչողական և տնտեսական բարձր արժեքներ ունեցող առանձին էկոհամակարգերի ու բնության հուշարձանների բնապահպանական, գիտա-ճանաչողական, առողջապահական և ռեկրեացիոն բարձր արժեքներով: Անտառներն առաջին կարգի են և ունեն հողապաշտպան, ջրակարգավորիչ, գիտական և տնտեսական նշանակություն: Ազգային պարկի արգելոցային տարածքն ունի հարուստ բուսական և կենդանական աշխարհ, այստեղ են գտնվում Հաղարծինը, Ջուխտակը, Գոշավանքը, Մաթոսավանքը:

Դիլիջանի ջրամատակարարումն իրականացվում է մակերևութային ջրերից: Ջրամատակարարման համակարգի մատակարարումն իրականացվում է «Գոլովին»,

«Բլդան» և «Ֆրոլովո» գոտիներից: Գետերի ջրերը մաքրվում են մաքրման կայանում, բացի Շամախյան գետից, որի ջրերը հոսում են դեպի բաշխման ցանց՝ առանց նախնական մշակման: Մակերևութային ջրերը բնութագրվում են թեթև հանքայնացմամբ, չափավոր կոշտությամբ և բարձր ագրեսիվությամբ: Մակերևութային ջրերն ունեն սելավների ձևավորման թույլ պոտենցիալ և միջին ակտիվացում (3-10 տարին մեկ): Գարնանային հալքի ժամանակ ջրի աղտոտման ռիսկը բարձր է, քանի որ Դիլիջան քաղաքի ջրի մաքրման կայանը վերանորոգման և արդիակայացման կարիք ունի:

Նախագծով նախատեսվում է աշխատանքների իրականացում մի քանի բնագավառներում՝ քաղաքների և խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, աղբավայրերի ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման տեխնիկական միջոցների տրամադրում: Բնակավայրերի և մարզի ամբողջ վարչատարածքի սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողության ուժեղացում:

Թափոնների հեռացումը Դիլիջանում իրականացվում է պայմանագրային հիմունքերով: Թափոնների հավաքման գործընթացում ամենամեծ խնդիրը քաղաքում աղբավայրի սահմանափակ կարողություններն են և դրանց տեղակայվածությունը գետից 50-60մ հեռավորության վրա:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1760,2 հա մակերես: Դիլիջանի տարածքում գործող աղբավայրեր չկան (նախկինում՝ բնակավայրից 4.5կմ հեռավորության վրա գտնվող գործող աղբավայրը կոնսերվացվել է և աղբը հեռացվել): Մոտակա գործող աղբավայրը գտնվում է Հաղարծին բնակավայրի տարածքում և նախատեսվողը՝ Վանաձորից Սպիտակ տանող ճանապարհին:

Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատթարացմանը:

Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի թափոնները տեղադրվում են կենցաղային աղբավայրում:

Մինչև սանիտարական աղբավայրի կառուցումը, նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքների պարսպապատում և բարեկարգում: Աղբահանությունը լինելու է կազմակերպված, պարբերաբար տոփանելով և հողով ծածկելով, մինչև աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը: Ինչպես նաև կազմակերպելու է աղբի տեսակավորում՝ հեռացվող աղբի քանակը նվազեցնելու և, որպես երկրորդային հումք օգտագործելու նպատակով:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Աղստև» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10/0.4կՎ և 6/0.4կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Ըստ «Գազպրոմարմենիա» ՓԲԸ-ի տեղեկատվության Դիլիջան միկրոռեգիոնում ներառված բնակավայրերից Աղավնավանք և Հովք բնակավայրերը գազաֆիկացված չեն: Գոշ և Խաչարձան բնակավայրերի գազաֆիկացումը շատ փոքր տոկոս է կազմում, համապատասխանաբար մոտ 10 և 7 տոկոս: Ազգային պարկի հարակից համայնքներից Դիլիջան քաղաքը գազաֆիկացված է գրեթե 80 տոկոսով, իսկ Թեղուտ և Հաղարծին բնակավայրերը՝ մոտ 65 տոկոսով: Ազգային պարկի որոշ հատվածներով անցնում են բարձր

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ճնշմամբ գազատարներ:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները (արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ)՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր դիտարկվում է արևային էներգիան:

Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով, հասանելի է նաև բջջային կապը:

Տրանսպորտային ցանցը լավ է զարգացած, Երևան-Սևան-Իջևան ճանապարհն անցնում է Դիլիջան քաղաքի և ազգային պարկի միջով:

Մարզի բնապահպանական հիմնախնդիրները, մասնավորապես, կապված են անտառային էկոհամակարգերի գերշահագործման հետ, որի պատճառով խախտվել է՝ անտառի ինքնավերականգնման ունակությունը և դեգրադացվել են անտառային էկոհամակարգերը: Ապօրինի անտառհատումների հետևանքով ակտիվացել են հողերի էրոզիոն երևույթները և սողանքները: Մարզի 25 համայնքներում առկա են սողանքային գոտիներ:

Դիլիջանի տարածաշրջանի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն՝ արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտումն՝ արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը՝ կոշտ կենցաղային թափոններով, ավտոտրանսպորտի արտանետումներով և կեղտաջրերով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Դիլիջանի տարածաշրջանի համայնքներում գործում են կավի, տուֆի, գունավոր կոնգլոմերատների, պորֆիրիտների և ավազակոպճային հանքավայրեր, որոնց հիմնական արտանետումները մթնոլորտ արտանոտվող անօրգանական փոշին է:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, թեպետ գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների հոսքը ցածր է:

Համայնքների տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր, աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար:

Դիլիջանի տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 8 գերեզմանոց ընդհանուր ~20,0 հա տարածքում: Գերեզմանոցներում սանիտարական գոտին պահպանված /ՍՊԳ/ չէ, ինչի համար նախատեսվում են կարգավորող միջոցառումներ:

Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի պահպանում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Դիլիջանի համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար նախատեսվում է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված

կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում՝ համայնքապետարաններում,

- նախագծերին և ծրագրերին համապատասխան վերականգնման աշխատանքների և նոր տարածքների կանաչապատման իրականացում, ապահովելով հետագա ոռոգումը,
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում:

Նախագծով նախատեսված է գյուղական համայնքների կանաչապատում՝ շրջանային նշանակության այգիներ, կանաչ գոտիներով սպորտ-հրապարակներ և այլն, որպես օդը մաքրող գործոն: Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդամենը կազմում են 15.1հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10մ²/մարդ: Դիլիջանում և համայնքներում ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսը կկազմի 31.84 հա, իսկ սահմանափակ օգտագործման կանաչը՝ շուրջ 1584.18 հա:

Միկրոռեգիոնի համայքները գտնվում են Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում, այդ համայնքների տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը թափվում են Աղստև գետ, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը:

Թեպետ Դիլիջան քաղաքային համայնքի համար Հաղարծին գյուղի տարածքում կառուցվել է տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի նոր կենսաբանական մաքրման կայան, այնուամենայնիվ համայնքի գյուղերից երկուսը թեև ունեն կոյուղու ցանց, բայց միացած չեն կոլեկտորին, դրանց խողովակներն ուղղված են դեպի գետը: Նախատեսվում է դրանք ևս միացնել գլխավոր կոլեկտորին և մաքրման կայանում իրականացնել կեղտաջրերի կենսաբանական մաքրում:

Դիլիջանի տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր բնակավայրերի համար նախատեսված է հեղեղատար կոյուղու ցանցի նախագծում և կառուցում: Տարվա ընթացքում անձրևաջրերի քանակը հաշվարկված է գործող մեթոդակարգի համաձայն: Տեղումների տարեկան քանակը կազմում է 639 մմ:

Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառական նշանակության և զբաղեցրած տարածքների էական փոփոխություն չի նախատեսվում:

Հիմք ընդունելով առկա վիճակի վերլուծությունը կարելի է եզրակացնել, որ Դիլիջանի տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի ու կոյուղու կառուցում և բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանության և տեսակավորման կազմակերպում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում, աղբամշակման գործարանի կառուցում՝ Կառնուտ գյուղից դեպի հյուսիս (600 տ/օր հզորությամբ): Գործարանում նախատեսվում է վերամշակել նաև Գյումրիի հարակից բնակավայրերից հեռացվող աղբը,
- ճանապարհի եզրերին ու ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին անցում, ինչը կկրճատի մթնոլորտ կատարվող արտանետումները՝ տարեկան 55.57 տ/տարի,
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունների և Տավուշի մարզպետարանի կողմից ներկայացված առաջարկությունները:

Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Տավուշի մարզի Դիլիջանի և հարակից գյուղական բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման համատեքստում, շրջակա միջավայրի պահպանությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով համալիր գնահատվել է՝ առկա իրավիճակը, վերհանվել են բնապահպանական խնդիրները և ընտրվել են զարգացման այն սկզբունքները, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Բնակավայրերի տարածքների կարևոր

էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարը:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրութային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Հիմնադրութային փաստաթղթով նախատեսվող գյուղատնտեսական, շինարարական և այլ աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած հնարավոր պատմամշակութային և հնագիտական շերտերի առկայության դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունը ստանալուց հետո:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ատրիում Պրո ստուդիո» ՍՊԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Ա. Վարդանյան